թիւն կազմէին ի Բագու և նորոգէին այս նշանաւոր վանքը և գործադրէին յօգուտ ազգային կրթութեան, ինչպէս Աղէքսանդրապօլցի Հայք Հառիճ վանքում հաստատել են ընկերութիւն 1850 թուէն։

Այս և ամեն բան Աստուծոյ տնօրէնութեանը յանձնելով կ'խնդրեմք մեր ազգային գործերին յաջողութիւն և յառաջադիմութիւն, Դաւիթ մարգարէի հետ և մենք ասենք.

«Տէր հայեաց յերկնից և տես - այց արա այգւոյս այսմիկ և դարման տար սմա, զոր տնկեաց աջդ». քանզի նոյն մարգարէի ասածին համաձայն «Եթէ ոչ Տէր շինէ զտուն, ի նանիր վաստակին շինողք նորա»։

Տաճարն ունէր հետեւեալ արձանագիրն։

Դրան ճակատին Անտոն վարդապետի արձանագիրն է՝ զոր Զահխաթունեանց և Ջալալեանց եպիսկոպոսներն իրարից տարբեր կը գրեն - իսկ ներկայն այսպէս է.

‹ Քրիստոսի թուին ՌՁՃԶ (1680) Արդ ես հուսկ Անտոն վարդապետս Նորոգեցի զԱստուածածնի վանքըս, որք հանդիպիք սմա յաղօթս յիշեցէք ի Տէր. թուին Հայոց ՌՃԻԹ։

Նոյն դրան մօտ պատի վրայ գրուած.

«Ես Մէյսարեցի Աբրահամի որդի Մատթեսի Օսէփ. Նորոգեցի Ս. Աստուածածնի վանքի առաջն. թվին ՌՄԿԱ› (1812)։

Այս պատի առաջին կան շատ տապանաքարեր վարդապետաց և քահանայից, որոց միոյն վրայ գրուած է.

‹Այս է տապան Պետրոս՝ վարդապետի. որ և լինի առաջնորդ Մէյսարու վանքի, ՌՄՀԱ (1822)։